

որդ նամակին մէջ քրիստոնէական համակերպութեամբ կը մխիթարէ ինքզինքը ու կ'օրհնէ Նախախնամութեան անհասանելի տնօրէնութիւնը, ու կը գոհանայ Տիրոջմէն որ իր որդին երեք օր առաջ, իր մահուան անկողինին մէջ, «բարիօք խոստովանութեամբ և զըզջական արտասուօք», օրհնաբանական և գոհութեան աղօթքներ կ'ընթեռնու ինքնին. երկարօրէն կ'աղօթէ նաև վերջին օրը ու Նարեկացիի Որդի Աստուծոյ կեցողանայ աղօթքը շրթունքներուն վրայ՝ մէկ կողմ կը դառնայ և կը ննջէ ի քուն յաւիտենական (էջ 497-8):

Մինաս Ամգեցի 1692 Նոյ. 23ին, Երուսաղէմի մէջ կ'առնէ Գրիգորիս վարդապետի մահուան գոյժը ու այդ օրուան թուականով կ'արձանագրէ իր Օրագրութեան մէջ. «Նոյեմբեր ԻԳ, օրն Զորեքշարթի, գիշերս քունս փախաւ, զի լուա զայրումն Ըստամպօլու Հրեշտակապետ եկեղեցոյն և զման Քօմուրնի Գրիգոր[իս] վարդապետին» (թղ. 165ա):

Գրիգորիս վրդ. ծնած է Մահտեսի Ամբակումի մահէն (1658 Նոյեմ. 3) վեց ամիս ետք, այսինքն 1659 տարուան Մայիսի առաջին օրերուն: Կը վախճանի 1692 Օգոստ. 6ին, որով իր կեանքի տևողութիւնը կը լինի 33 տարի և 3 ամիս: Կուսակրօն քահանայութեան սքեմ կը կրէ չուրջ 12 և կէս տարի, ձեռնադրուած ըլլալով 1680 տարուան առաջին քառորդին:

Է. ՄԱՂԱՔԻԱ ՔԷՕՄԻԻԲԵԱՆ. — Սա միջնեկ որդին է Երեմիա Զէէպիի:

Վլանկայի Ս. Նիկողայոս եկեղեցին հրկիզուելէն վերջ կը վերաշինուի և 1662 Մարտ 9ին, Դատաւորաց Կիրակի օրը, անոր օծումը կը կատարուի: Հետեւեալ առտուն, Մարտ 10, Երկուշաբթի, Մաղաքիա հոն կը մկրտուի ու կ'ըլլայ առաջնածինը անոր աւա-